ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ և
ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

Հաստատութենական աղյուսակ

Նպատակ

Համայնքում անցկացվող ընդհանուր ժողովի ժամանակ, համայնքային մասնակցային սկզբունքով (տեղական ինքնակառավարման մարմիններ, հիմնարկ-ձեռնարկություններ, կրթական օջախներ, առողջապահական կազմակերպություններ, բնակիչներ և այլն) լրացվում է աղյուսակ, որի նպատակն է բացահայտել և դասակարգել պետական և ոչ պետական, հասարակական և միջազգային այն կառույցները, խմբերն ու անհատները, որոնք ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունեն կամ ունեցել են համայնքի սոցիալական կյանքի և զարգացման ոլորտների վրա, հատկապես ուշադրություն դարձնելով երեխայանպաստ գործունեություն ծավալող, հաշմանդամություն ունեցող երեխաների կենսական կարևորության, առաջնային և այլ հարցերը կարգավորող կառույցների վրա: Այդ կառույցները որոշվում են ըստ համայնքի կյանքում ունեցած իրենց կարևորության և ազդեցության (դրական, բացասական կամ անորոշ) աստիճանի:

Այստեղ պետք է նախատեսել եղանակային տեղեկատվության և կանխատեսումների, վաղ ազդարարման, ագրո-օդերևութաբանական ծառայությունների, ինչպես նաև պետության կողմից առաջարկվող գյուղատնտեսական կլիմայակայուն նոր տեխնոլոգիաների և ֆինանսական մեխանիզմների մասին տեղեկատվության հասանելիության հարցը՝ արդյո՞ք համայնքում առկա է նման խնդիրներով զբաղվող որևէ հաստատություն կամ մեխանիզմ: Եթե այո, ապա ինչքանով է հասանելի և ինչ դերակատարում ունի:

Ակնկալվող արդյունքներ

ՎԽԿԲ գործընթացում կարևորվում է շահագրգիռ կողմերի մասին տվյալների հավաքագրումը, քանի որ աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների և նախագծերի իրականացման ժամանակ կարող է առաջանալ նրանց մասնակցության, աջակցության, միջամտության կարիք: Հիմնական շահագրգիռ կողմերը քննարկման մասնակիցների կողմից գնահատվում են 1-ից 5 միավորով՝ ըստ համայնքի վրա ունեցած իրենց ազդեցության (տարբեր ոլորտներում իրենց աջակցության, տվյալ համայնքում փաստացի գործելակերպի) և համայնքի համար կարևորության (կառույցների կարևորությունը, արժեքը համայնքի առօրյա և տնտեսական կյանքում): Գնահատականները լրացվում են աղյուսակում:

Ազդեցությանն ու կարևորությանը տրված գնահատականները միջինացվում են և համեմատվում: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս համայնքին կողմնորոշվել հիմնական շահագրգիռ կողմերի ընտրության հարցում՝ աղետների ռիսկի նվազեցման միջոցառումներին հնարավոր մասնակցություն կամ աջակցություն ցուցաբերելու համար:

Հաստատութենական աղյուսակ

Կառույցներ, խմբեր, անհատներ	Ազդեցություն, մասնակցություն	Միջինը	Կարևորություն	Միջինը
Տեղական ինքնակառավարման մարմիններ				
Մարզպետարան				
Միջազգային կազմակերպություն				
Էկոնոմիկայի նախարարություն (գյուղատնտեսություն)				
Արտակարգ իրավիճակների նախարարություն				
Շրջակա միջավայրի նախարարություն (Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն)				
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն				
Կրթություն և առողջապահություն				
ՄԱԶԾ				
ՅՈՒՆԻՍԵՖ				
Սեյվ դը Չիլդրեն				